ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Հանրապետության տոնի առթիվ

28.05.2021

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:

1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումը տրամաբանական շարունակությունն էր Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում մեր ժողովրդի մղած հերոսական պայքարի ու հաղթանակների: Հենց այդ ճանապարհով հարյուրամյակների դադարից հետո ծնունդ առավ Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ դառնալով հայ ժողովրդի պատմության շրջադարձային իրողություն և անկոտրում կամքի վկայություն:

Գլուխ խոնարհվելով հայ ժողովրդի հերոս զավակների և հայրենիքի պաշտպանության համար նահատակված քաջերի հիշատակի առջև՝ ևս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ՝ ցանկանալով խաղաղություն և արևշատություն մեր ազատ ու անկախ պետությանն ու հայ ժողովրդին:

Փառք Հայաստանի առաջին Հանրապետությանը, որ հիմնասյունն է ներկա և ապագա Հայաստանի: